

կերպով զինքը (Առաքելը) նաւապետին յանձնարարեց, եւ այսպէս մեկնեցաւ:»

Տարակոյս չկայ ուրեմն որ Առաքել ճարպիկ մէկն է որ կրցեր է Անգլիոյ մէջ նիւթական անկեղծութիւն զտնել եւ մինչեւ իսկ Անգլիոյ թագաւորին եւ Եորքի դուքսին ներկայանալ եւ անոնց հովանաւորութիւնը շահիլ: Մեղի հասած է Անգլիոյ Չարլզ Բ. թագաւորին նամակը Առաքելին տրուած, որուն կարեւոր մասերը հոս կը թարգմանեմ:

«Չարլզ, շնորհիւ Աստուծոյ թագաւոր Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ Իրլանտայի, առ բարձր եւ անեղ իշխանըդ, տէր, սուլթան, Շահ Ապպաս Խան, թագաւոր Պարսից եւ Մարաց նաեւ Հայոց: Մեր եղբայր եւ շատ սիրելի բարեկամ, ողջոյն, ձեր բոլոր հարստութիւնը բարգաւաճի:»

«Ամենաբարձր եւ անեղ իշխան, եղբայր եւ սիրելի բարեկամ:»

«Ինչպէս որ Եւրոպայի քանի մը ինքնակալները դիտած են այս նամակները բերող մեծապարզ Հայաստանի Արքեպիսկոպոս Առաքելի մասին, անոր շատ մեծ խոհեմութեամբ եւ եղական եռանդով մեր քրիստոնէական կրօնքին համար կատարածին, եւ նեղութիւն կրած են (Եւրոպայի ինքնակալները) նամակներով շարժելու Ձեր Վեհափառ Բարձրութեան (զուխը) ի նպատակ բարեպաշտ ճիգերուն (Առաքելի) իր եկեղեցւոյն Երեւանի քաղաքին մէջ ըստ իր արարողութեան կատարելու: Մենք, ձեռննպահ մնալ չցանկալով այսպիսի գովելի գործէ մը, եւ ոչ ալ անուշադիր մնալ հասարակաց կամքին, նաեւ հաւատալով որ Մեր միջամտութիւնը Ձերդ Վեհափառ Բարձրութեան քով պիտի ունենայ ոչ փոքր ազդեցութիւն երախտագրութեամբ պիտի ընդունինք Ձեր Վեհափառ Բարձրութեան շնորհատուութիւնը»

Նամակը կը խօսի նաեւ առեւտուրի մասին «որ մեր հպատակները կ'ընեն Ձեր Վեհափառ Բարձրութեան սահմաններուն մէջ . . .»:

« եւ Մենք մեծ փափաքով պիտի ընկալինք ներկայացուած առիթները Ձեր Վեհափառ Բարձրութեան լաւ

կերպով արժանի ըլլալու: Վերջապէս, Ձեր Վեհափառ Բարձրութիւնը Մենք սրտանց Աստուծոյ խնամքին կը յանձնենք:»

«Տրուած Ուհայդհոլի Պալատին մէջ, Տրդ օր Օգոստոսի 1670:»

«Ձերդ Վեհափառ Բարձրութեան լաւ եղբայրը եւ բարեկամը»

Չարլզ Թ(ագաւոր): (*)

1670-էն վերջ Առաքել ո՞ւր գնաց կամ ի՞նչ ըրաւ առ այժմ յայտնի չէ: Ամէն պարագայի տակ զինքը Երեւան չենք գտներ:

1678 Օգոստոս 6-ին Պապական նրբիրակը Վենետիկէն կը գրէր Հաւատոյ Տարածման Ժողովին որ իրենց այցելած է Նախիջևեանի Արքեպիսկոպոսը, այսինքն Առաքել, որ Կ. Պոլսէն եկած է Սրալագոյի վրայով, եւ տեղեկացուցած է Նուիրակին Հայոց Պատրիարքին, այսինքն Կաթողիկոս Յակոբ Զուղայեցիին ակնկալուած ժամանումը Ռուսաստանի վրայով Հոռոմ, 25 եպիսկոպոսներու հետ Պապին առջեւ ծնրադրելու համար:

Ինքն իսկ Առաքել կը գրէր «Ի 12 Նոյեմբերի, 1678 ի Վենետիկ, նամակ մը ուղղեալ «Վսեմագունեղ տեառք», այսինքն Հոռոմի Հաւատոյ Տարածման Ժողովին:

Ստորեւ այդ նամակը Հաւատոյ Տարածման Ժողովին Դիւանէն առնելով, առաջին անգամ ըլլալով կը հրատարակեմ:

«Ձերում սրբազունեղութ(ան) յայտ լիցի սակս հիքացելոյս որ այս վեցտասան ամիսք են որ ընդ պատրիարքին մերում ելեալք յաթոռոյն եւ մեծաւ ուխադրութեամբ բաժանեցաք ի միմեանց, ըստ յառաջին տրակին մերում անցանիլ կամելով ընդ մօսկով. ճանապարհ չեն տուեալ ընդ այն անցանիլ. եւ դարձ արարեալ ընդ կողմամբն թէնողուպոլիս զալ ընդ կասպիականաւ (իսկ վրան գըրչէն պոնտոսիւ), այլ թշնամիք ոմանք մասնեալ են իշխանին տեղւոյն իբր թէ ջաշուշու(ք)ի(ւն) երթա, եւ նա կամեցեալ է ընդ իշխանին գիւր բանն չինել եւ զառաջ եղեալ ճանապարհն ընթանալ. բայց ամենաջարին խարդախութի(ւ)ն»

(*) Անդ էջ 414, Ծանօթ. 2: